

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիւր 10 րոպէ, կէս տարեկան 6 րոպէ:

Առանձին նամակները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարարարարացիք պիտու են սղգակի

Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատունը քաղ է առաջ տեսն 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների նամակը, զմարում են խրարանկար րաւին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հրաւեր նուիրաւորութեան: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Գերմանիա: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Մատենագրութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԱՆԻՐ ՆՈՒՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ, ՈՐ ՊԵՏԻ Է ՀԻՄՆԱԿԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԿԱՅՈՐ ԱԼԷՔՍԱՆԳՐ Բ. Ա. ՆՈՒՆՈՎ:

Այժմ, երբոր մենք արտասուք ենք թափում մեր վաղակորուստ թագաւոր-Նա-հատակի համար, ժամանակ է մեզ մտածել թէ ինչպէս ամենից լաւագոյն կերպով մենք կարող ենք յարգել և անմահացնել մեր մէջ սրբազան յիշատակը Նորա, Որը մեզ համար այնքան թանկագին էր կենդանի ժամանակ և Որը առաւել ևս թանկագին դառաւ իր նահատակական մահից յետոյ:

Ռուսաստանի երկու մայրաքաղաքները, որպէս ընդհանուր ուսուցիչ զգացմունքներ արտայայտեցին, արդէն վճռել են հոյակապ յիշատակարաններ կառուցանել մեր անմահանալի թագաւոր-Ազատիչին՝ Պետերբուրգում—տաճար այնտեղում, որտեղ ընկաւ մեր մեծ թագաւորը, Մոսկույում—արձան կրկնել հրապարակի վրա: Այս գործի համար լայնատարած Ռուսաստանի ամեն ծայրերից արդէն հաւաքվում են առատ նուիրատուութիւններ:

Մեր փառաւոր Կովկասը իր բազմաքեղանի ժողովրդով, որ միակերպ ջերմ հաւատարիմ է իր թագաւորներին, անշուշտ

նոյնպէս յետ չի մնայ այս ազնիւ փափաքից—անմահացնել Կովկասի մէջ սրբազան յիշատակը Նորա, Որը այնքան սիրում էր յորան հաւատարմապէս մնացած Ռուսաստանի հետ, Որը միշտ եղել էր Հայր և Բայրերար իր բոլոր հաւատարիմ ազգերի համար:

Ամբողջ Կովկասի կենտրոնը, Թիֆլիսը, դեռ շատ ժամանակ չէ, որ բազմ ունեւորներն իր պատերի մէջ հանգուցեալ Կայսրին և դա արդէն երկար ժամանակ է, որ Նորա օգոստոսիաւ եղբոր բնակութեան տեղ է. այդ պատճառով նա ևս յետ չի մնայ մայրաքաղաքներից և կը շտապի ցոյց տալ իրան, որպէս ամբողջ Կովկասի ազգերի երախտագէտ զգացմունքների ուղիղ արտայայտիչ: Թիֆլիսում նոյնպէս պէտք է կառուցվի յիշատակարան Մեծ թագաւոր-Ազատիչին ի յիշողութիւն և յօրինակ պաշտօն սերունդներին:

Մեր Կովկասի յիշատակարանը իր կոչումով և վսեմութեամբ պէտք է նոյնպէս լինի արժանի անուան Նորա, Որին դա նուիրվում է, նա պէտք է լինի յարմար այն խորին և հաւատարիմ հպատակական զգացմունքների, որով ոգևորված են Կովկասի բոլոր ազգերը, առանց ազգութեան և կրօնի խտրութեան: Մեր յիշատակարանը, կրկնով իր վրա ամենաողորմած, ամենամարդասէր Միապետի փառաւոր անունը, պէտք է լինի անսպառնիչ, յաւիտենական աղբիւր բարութեան և ողորմածութեան, որով միշտ տաքացրած էր Նորա ջերմ, սիրող սիրտը:

ՈՐԲԱՆՈՑԸ բոլոր երկսեռ ազգատ որը մանուկներին համար, առանց նրանց ցեղական ծագումի խտրութեան, կը լինի ամենաարժանաւոր յիշատակ Նորա համար, Որ

իր կենքում միշտ այդքան սիրում էր և փայփայում էր մանուկներին: Այդ որբանուցի շրջանը, ուրեմն և նորա օգուտի որբանութիւնը երկրի համար բոլորովին կախված կը լինեն այն նվթական միջոցներից, որոնք հիմն կը կազմեն նորա հիմնարկութեան համար: Քանի որ շատ կը լինեն նուիրատուութիւնները, այնքան ևս առաւել վսեմ և բարերար կը լինի այդ Կովկասեան յիշատակարանը:

Ուրեմն ի նկատի ունենալով այդպիսի ազգասիրական, այդպիսի բարեգործական նպատակը, ժողովները միասին ի յիշատակ մեր ընդհանուր թագաւոր-Հոր, որպէս Նորա սիրած որդիք: Ընդհանուր կարողութեամբ հիմնեք ՄԱՆԿԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑ ԿԱՅՈՐ ԱԼԷՔՍԱՆԳՐ Բ., որը իր վսեմութեամբ արժանաւոր լինի թէ Նորա յիշատակին և թէ մեզ, որոնց համար Նա դոհեց իր սեպհական կեանքը:

Նուիրվով ըստ կարողութեան մեր լուսման մեր թագաւորի— և հայրենիքի սիրող տաճարին, մենք միտը ունենանք, որ յովող ձեռք չէ սպասվում:

Նուիրատուութիւնները ընդունվում են առանձին մասնաժողովում, որը նշանակված է Թիֆլիսի Բարեգործական Ընկերութեան կողմից նախագահութեամբ իշխանուհի Ալեքսանդրա Մարկարովնա Մեկիքովի, Կովկասեան զօրքերի Գլխաւոր Հրամանատարի Օգնականի տանը: Բոլոր անձանց և հաստատութիւնների նուիրատուութիւնները մասին տեղեկութիւնները կը հրատարակվեն ամեն շաբաթ տեղական լրագիրներին մէջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի Բարեգործական Ընկերութիւնը ուղարկել է մեզ մի հրաւեր նուիրատուութեան թագաւոր Կայսր Ալեքսանդր II-ի անունով Թիֆլիսում մի մանկական որբանոց հիմնելու նպատակով: Աւարտութեամբ տպւում ենք ներկայ համարի առաջին երեսի վրա այդ պաշտօնական հրաւերը և յայտնում ենք որ «Մշակ» խմբագրութեամբ յանձնված է նոյնպէս մի տպված թիւթ, որի վրա ցանկացողները յօգուտ որբանոցի նուիրատուութիւն անելու, կարող են գրվել ներկայանալով խմբագրութիւնը և մեզ յանձնել իրանց նուիրած գումարը, իսկ մենք, մեր կողմից, կը հասցնենք յիշեալ գումարը Փոխարքայի օգնականի ամուսնուն, իշխանուհի Մեկիքովային:

Տեղական ուսուցիչներում կարգում ենք հետեւեալը. «Ապրիլի 8-ին ստացված է Թիֆլիսում Բարեգործային հրաման, որով թոյլ է տրվում բոլոր թաղային ներկայացուցիչներին և առհասարակ զուարթութիւններին սկսվել ֆոնդայի ամսվա շաբաթից»:

Ռուս թաղային առաջին ներկայացուցիչները ևս քննարկել են 19-ին, կիրակի օր:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ պատերազմական միջոցաւ կոմս Միխայիլ թողնում է իր պաշտօնը և նշանակվելու է պետական խորհրդի նախագահ:

Ապրիլի 3-ին, ինչպէս հեղադրում են «Русский Курьер» լրագրին, կատարվեցաւ հինգ թագաւորապանների վրա մահվան պատիժը կախաղանի միջոցով: Գլխի Գեղեցիկ վրա դատավճիռը դեռ չէ կատարված, որովհետեւ նա յօդ է: Առաւօտից Սեմեմովսկի անագին հրապարակը լի էր զօրքերով և ամբողջ բազմութեամբ: Սպիտակ միւսի վրա նրանք էին Ռուսալով և Չեխալով, միւսի վրա Նիբալիչ, Պետրովսկայա և Միխայիլով: Նախքան գլխից Ռուսալով հաղորդեց, Միխայիլով խոստովանեց, Նիբալիչ միայն

վում, որպէս զի առաջն առնեն այդպիսի անցքերին: Բայց և այնպէս այնպիսի երկուքներ են պատահում այժմ, որ դրանք համախառնային նշանակութիւն կարող են ունենալ: Վերադառնալով ընտրութիւնների մասին, միթէ սակաւ հետաքրքիր խնդիրներ կարելի է յարուցանել, մշակել այդ մասին: Միթէ պակաս հետաքրքիր երեւոյթ է Պետերբուրգում, 19-ին մարտի քաղաքային ընտրութիւնները (քսան և հինգ) իր խորհրդարանին համար: «Մենք կարծում ենք, ասում է պ. Նիկոլաձէ, որ ոչ միայն ուսուցիչ, այլ նոյն իսկ եւրոպական իրաւաբանական գրականութեան համար, այս ընտրութիւնների հիմունքը և մանրամասնութիւնները անհուն նիւթ են ներկայացնում»:

Ուրիշ էլ շատ և առաւել ևս ծանր տարականերից իրաւաբանական թերթը կարող է, մեր կարծիքով, իր համար կերակուր գտնել իր գիտնական գործունէութեան համար Ռուսաստանի այժմեան քաղաքական կեանքի խնդիրների անցքերի մէջ: Մենք պնդում ենք մինչև անգամ, որ ինչ անկարելի էր երկի, այն լինելու է վաղը: Մինչև այսօր ոչ մասուլի մէջ, ոչ կեանքի մէջ տեղ չէին կարող ունենալ իրաւունքների, օրինակարգի վրա խնդիրները: Ամենքն էլ կարծում էին, որ այն դժուարութիւնները, որպիսիք ծագեցան Ռուսաստանի կեանքի մէջ վերջին քսան տարուայ ընթացքում, կարելի էր վերացնել մի պետական գործող անձի անհատական եռանդուն ուժով, կամ մի ուրիշ մարդ առաւելակական ճարպիկութեամբ: Ամենքն էլ անձնաւորութիւններից էին սպասում վերաթիւն, իսկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏՆԵԱԳՐՈՒԹԻՒՆ

«Юридическое Обозрѣніе» (Իրաւաբանական Տեսութիւն) Շաբաթաթերթ (Հրատարակվում է Թիֆլիսում հինգշաբթի օրերով, մօտ 2 տպագրական թերթ): № 1.—Ա. Ստեփանովի խմբագրութեամբ:

Ապրիլի 2-ին Թիֆլիսում լոյս տեսաւ մի նոր հանդէս, ուստիքէն լեզուով, «Իրաւաբանական Տեսութիւն» անունով, որը արժանի է ուղարկութեան ոչ միայն մասնագէտներին, այլ և նոյն իսկ հայ հասարակութեան ամեն մի լուսաւորեալ անգամի կողմից:

Մեր այս յօդուածը նուիրում ենք հայ հասարակութեան ուղարկութեան այն պատճառով, որ առաջնորդի գրած իրաւաբանական թերթը հետաքրքրելու է և հայ ժողովրդի կեանքով իրաւաբանական տեսակետից նայելով: Ռուս հասարակութիւնը ոչ թէ հետեւում է մի օր և է նեղ այս կամ այն ազգային հայեացքի, կամ նպատակ է դրել այս կամ այն պաշտօնական ուղղութիւն անցկացնել իր հրատարակութեան մէջ, ոչ, նա իրան համար շատ լուսաւորեալ կէտ է ընտրել, շատ համակրել խնդիր է որդի իր հանդէսի համար, մի խնդիր, որից հաւասարապէս և օգուտով կարող է շահել ամեն մի

ազգ, լինի դա հայ, ուստ, վրացի և այլն: Ահա ինչու համար, կրկնում ենք, այս շաբաթաթերթը հայ հասարակութեան կողմից արժանի է առանձին ուղարկութեան:

Պէտք է ասած, որ մեր հայ պարբերական թերթերը, նոյնպէս և հայ ուսումնական դասը, ամենեւին չեն պարագիւլ և չեն պարագում մեր ժողովրդի իրաւաբանական կեանքով: Կարծես թէ հայ ազգը ամենեւին անձամբ է այդ կեանքին, կարծես թէ նա չէ կազմում հասարակութիւն, որը սպրդում է յայտնի օրէնքներով, ուստի յայտնի հայեացք այս կամ այն հասարակական երեւոյթի վրա, այս կամ այն յարաբերութիւնների թէ հասարակութեան անդամների միմեանց վերաբերութեամբ իրանց ամենօրեայ կեանքի մէջ, և թէ այդ անդամների իրիւ անհատների կամ մասերի դէպի ամբողջութիւնը, որը ձևանում է մեր աչքի առաջ իբրև հասարակութիւն, եկեղեցի, պետութիւն և այլն և այլն: Այս ամենի մասին մենք ամենեւին ոչինչ տեղեկութիւն չունենք, մեզանից ոչ ոք չէ դուրս եկել հետազոտող մեր ժողովրդի կեանքի այս մասի. մենք սրա վերաբերութեամբ այնպիսի ազդեցութիւն մէջ ենք, որ մի այսպիսի երեւոյթ կատարեալ ամօթ և խայտառակութիւն է կազմում մեզ համար: Մենք չենք աշխատել մինչև անգամ երբեմնապէս կտոր կտոր տեղեկութիւններ տալ ազգերի իրաւաբանական կեանքից, ծանօթացնել նրանց հայեացքների հետ կեանքի այլ և այլ յարաբերութիւնների նկատմամբ:

Ահա մի ուրիշ պատճառ թէ ինչու համար մենք նուիրեցինք այս յօդուածը վերոյիշեալ իրաւաբանական թերթին, աչքի առաջ ունենա-

լով նրա նպատակը և ուղղութիւնը, որի մասին այս րոպէին կը պատմենք:

Շաբաթաթերթին առաջին յօդուածը նուիրած է օրուայ խնդրին, որը ընդհանրապէս հիմն պէտք է համարել ամեն մի աշխատութեան, և մասնաւորապէս իրաւաբանական հանդիման: Զօգուածը պատկանում է յայտնի «Обзор» լրագրի խմբագիր Նիկոլաձէին: Պարունը շատ իրաւացի է, երբ բացականչում է. «Ոչ այնքան բաղաւոր գտնվեցաւ առաջին քայլում մեր «Իրաւաբանական տեսութիւնը», ամենեւին իրաւաբանական նրբութիւններով ու խնդիրով չեն զբաղված այժմ ընթերցող հասարակութեան մտքերը»:

Նոր թերթի ծննդեան խառն օրերում, Մտածող մարդու հանգիստ խօսքը անհետք կորչում, մեռնում է ամեն կողմից ձայն տուող սղագրականի, հաւաչանքների և անէծքների ամբողջ փոթորիկ մէջ: Սրին և ոչ իրաւունքին է առաւ խօսքը մարտի մէկի ողբերգական անցքով: Այնպէս որ կարծես թէ «Իրաւաբանական տեսութեանը» այսպիսի ժամանակ բոլորովին անկարելի է մի բան չինել, կարծես թէ ընթերցող իրաւունք կունենայ մտածելու, որ այսպիսի խառն օրերում մի թերթի, որը իրան նուիրել է իրաւանց, մնում է պարկեշտութեամբ ձեռները խաչել կուրծքի վրա, նստել ծովի ափին ու սպասել այնտեղ լաւ եղանակին:

Գլխաղաղաբար այդպէս երևում է առաջին քայլում և միակողմանի հայեացք ունենալուց դուրս վրա: Գայտնի բան է, ասում է յօդուածագիրը, այժմ հասարակութիւնը զբաղված է մարտի 1-ի անցքով, կարողում է նոյնպէս թէ ինչպիսի ոստիկանական միջոցներ են գործ դրել

խօսակցեց քահանայի հետ, բայց խոստովանութենից և հաղորդվելուց հրաժարվեցաւ, խեղճութեամբ և Պերովսկայա մերձեցին քահանային ընդունելու: Նախընթաց օրը բոլորն էլ նամակներ գրեցին իրանց ազգականներին: Պերովսկայա գրեց իր մօրը, Ռիսակով իր ծնողներին և Միխայլով իր հղբօրը: Գիշերը անցկացրին հանգիստ, բայց Ռիսակովից: Կախաղան բարձրանալու ժամանակ Պերովսկայա, Նիբալիչ և խեղճութեամբ հանգիստ էին, Ռիսակով գրգռված և գունաթափված էր, Միխայլով անտարբեր էր: Բոլորը բացի Պերովսկայայից համբուրեցին խաչը: Խեղճութեամբ ժողովուրդը երբ քահանաները բարձրացան էշաֆօտի վրա և մօտենալով քահանային ու խաչ համբուրելուց յետոյ մի բան ասեց քահանային և նորից ժողովուրդը: Խեղճութեամբ, Միխայլով և Պերովսկայա էշաֆօտի վրա կանգնած միմեանց վերջին հրաժարական համբոյր տուեցին մեծանշան առաջ:

Պ. Հանկելիչի ֆրանսիացի դաստիարակներ, կանանց խնդրի վրա, լինելու է Արժանաւորութեամբ վաղը, ուրբաթ օր, ապրիլի 17-ին, երեկոյան:

Մարաբաղաբի ուսուցիչները հաղորդում են որ Բարձրագոյն Ընտանիքը տեղափոխվեցաւ Ս. Պետրբուրգից, Գաղտնիքով ամառանոցը:

Ս. Պետրբուրգի լրագիրները հաղորդում են, որ նոր մինիստր ժողովրդական լուսաւորութեան բարոյ Նիկոլայի նորերում այցելեց Ս. Պետրբուրգի համալսարանը: Նա յայտնեց համալսարանի վարչութեանը իր ցանկութիւնը որ մեր համալսարանները աւելի զործով և ուսումնով պարտաւէր, քան թէ, ինչպէս ուսանողներին մեղադրում են, աղմուկներ անելին:

«Новости» լրագիրը լսել է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ կը կազմվեն երկու նոր յանձնաժողովներ, որոնցից մինն յանձնված կը լինի մշակել այն փոփոխութիւնների ծրագիրը, որոնց ցանկալի է մոցնել այժման կրթական և բնական գիտելիքներում, իսկ երկրորդ յանձնաժողովը կը քննի այն հարցը թէ ինչպէս պէտք է բազմացնել ժողովրդական դպրոցները թիւը կայսերութեան մէջ:

«Голосъ» լրագիրը խօսքերին նայելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ վճռված է կրկին վերականգնելու 1863 թվի համալսարանական կանոնադրութիւնը և կատարել նրան առանց չեղելու նրա սկզբնական խնամարկ և առանց որ և է մասնաւոր փոփոխութիւն նրա մէջ մոցնելու:

Քանի որ հասարակութեան մէջ տիրապետում է իրերի վրա մի ազդեցիկ հայեացք, այն ժամանակ իրաւագիտութեան և մտքի մարդկանց մեծ մասնը պատկեր: Անցքերը ապացուցին, որ խոստացածը, սպասելի և աւետելի փրկութիւնը չեկաւ այն կողմից, որտեղից սպասում էին: Սուրա համար այժմ թէ մասնաւոր և թէ հասարակութեանը ուրիշ ոչինչ չէ մեծանալ, եթէ ոչ խնամարկ իրաւագիտութեան դասերի առաջ, պատմութեան փիլիսոփայութեան դասերի առաջ, նոյն իսկ այն դասերի առաջ, որոնց միայն յիշելիս զօրեղ մարդիկը արհամարհանքով էին և բռնակրք գործնում, իսկ ծարպիկութեամբ իրանց գործերը սարքողները սարքափելի ժպտում... Իսկ երբ այս դասերը—կամայ կամ ակամայ—կը յիշվին, հասարակութիւնը պարտաւոր կը լինի ուսումնասիրել այն հիմնադրութիւնները և օրինակագրերը (սխալմ), որոնց մէջ միայն պէտք է եւք գտնել այս դրութիւնից: Այս թէ ինչ պէտք է կազմել իրաւաբանական դասերի առաջ, ուղղակի առարկան: Սակայն միայն այսօրեւր ընդ է Կրանց հետ միասին կեանքը անխելի կերպով առաջ է բերում մեր օրէնսդրութեան ընդհանուր հիմունքների վերաբնութեան կարեւորութեան խնդիրը: Հնացած սխալներ վրա հիմնված, նա 1861 թ. փետրվարի 19-ից սկսեց մաս մաս շինվել այժման ժողովրդական իրաւունքի սկզբունքները վրա, և այժմ մի աննկարագրելի խառնուրդ է ներկայացնում մեր և մեր տեսակ շինութիւն, որի ներքին յարկը կազմած է տախտակներից, միջինը—աղիւսից, իսկ վերինը—մարմարներից... Գծաւոր է մեղ թոյլ տալ մի ենթադրութիւն, որ իւր թէ այդ

«Порядокъ» լրագիրը հաղորդում է որ այս օրերս մի ուսուցիչ Սկլորցովա բժշկութեան հարցաքննութիւն տուեց Փարիզի համալսարանում և արժանացաւ բժշկութեան դոկտորի աստիճանի: Հարցաքննութեան ժամանակ նախագահում էր երեկոյ ֆրանսիացի պրիւսիստը պ. Շարկո, որ նորերում ճանապարհորդեց Ռուսաստանում: Շարկո յայտնեց որ Սկլորցովայի բժշկական նշանաւոր հմտութիւնները պատկերներում նրա ուսուցիչներին:

Երեկոյն մեզ գրում են: «Այստեղի Հոլի-սիստան օրիորդական պետական դպրոցում, (գաղափարական), որ հիմնված է հայ սրբուհու յիշատակին և որտեղ աշակերտուհիները մեծամասնութիւնը հայուհիներն են, շատ ժամանակ է չենք տեսնում, որ մի օր օրիորդներին տանեն հայոց եկեղեցի: Օրիորդները հաղորդվում են մինչև անգամ ուսուցչական եկեղեցում: Աշակերտուհիները մեծ մասը բոլորովին մոռացել են նոյնպէս և իրանց մայրերի լեզուն: Օրիորդները մինի հայրը այս օրերս տուեց մի խնդիր դպրոցին, յիշելով այդ պակասութիւնը և աւելացնելով որ ծնողները յանձնում են իրանց դուստրներին այս կամ այն ուսումնարան նրանց անհրաժեշտ ուսում և կրթութիւն տալու համար և ոչ թէ իրանց դաստիարակելու և մայրենի լեզուից հեռացնելու նպատակով:»

Մեզ պատմում հետեւալը: Հաւաքաբարձական և թիֆլիսում շատ յայտնի մի հարուստ հայ վաճառական պ. Միրզախանեանց, անորդի լինելով, հասարակութեան մէջ իր անուան յիշատակը թողնելու համար վերցրել է նորերում իր մօտ մի օտարազգի 10 տարեկան երեխայ: Պատմողը աւելացնում է: «Միթէ անտէր, անօգնական հայ մանուկներ քիչ կան:»

Մի պարոն հաղորդում է մեզ հետեւալը: «Չառնի տուններին թիֆլիսի Մոդու եկեղեցում ինձանից քիչ հեռու երկու հայ օրիորդ վարժուհիներ կանգնած անընդհատ խօսակցում, ծիծաղում էին մինչև ժամանացութեան աւարտը: Այլ եւ չէմ իմանում այն բանի վրա թէ պատկերի օրիորդների խօսակցութիւնը հայոց եկեղեցում օտար լիցում էր, բայց ինչ բարոյական ներգործութիւն կարող է ունենալ եկեղեցին, Աստուծո տունը մեզ վրա, երբ մենք մտնում ենք այդ սրբազան տեղը ոչ թէ աղօթելու, բարոյական կրթվելու, հոգեկան, մտաւոր և բարոյական սնունդ ստանալու դիտաւորութեամբ, այլ միմեանց մէջ տեսնելու, խօսելու, ծիծաղելու համար: Եւ այդ անում են նրանք, որոնք երկուստարութեան կրթողներ են, վարժուհիները: Իմ կարծիքով աւելի լաւ է բոլորովին եկեղեցի չը մտնել, քան թէ դայթակղեցնել ուրիշներին:

Օրէնսդրութեան թէ հիմունքների և թէ մանրամասնութիւնների մի ամբողջ և գեղեցիկ սխալմ մին հասցնելը կատարվելու է, մեռած օրէնքի փորձով, դիւանատների մէջ առանց մասնաւոր և հասարակութեան մասնակցութեան: Միայն այն իրաւունքը և այն օրէնսդրութիւնը յիշելու ունեն հիմն «ժողովրդական» անուանվելու, որոնք... Մենք յոյս ունենք, որ մեր չաբաթաթիւր կը յաջողի գցել իր լուսնան մեր իրաւանց ընդհանուր հիմունքների վերաբնութեան աշխատութեան գործի մէջ: Այսպէս վերջացնում է իր յօդուածը պ. Նիկոլայեան:

Իրաւաբանական տեսութեան նպատակի այս ընդհանուր գաղափարը աւելի պարզացած մենք տեսնում ենք խնդրութեան առաջնորդող յօդուածի մէջ—«Թերթի խնդիրները»: Հարկաւոր ենք համարում «Մշակի» ընթերցողների ուշադրութիւնը դարձնել դրա վրա, որը շատ և շատ թանգազին և համակրելի են մեզ համար: Շատ համուտ կերպով սկսում է իր առաջնորդող յօդուածը խորագրութիւնը:

«Մենք ամենից աւելի լաւ ենք հասկանում և խոստովանում մեր թէ նիւթական և թէ բարոյական ուժերի սղութիւնը, մի այսպիսի կարեւոր և մեծ գործի համար, որպիսի է թերթի հրատարակութիւնը: Սրա համար չափից դուրս լայն և այդ պատճառով հազիւ հասնելի նպատակներ մենք մեր առաջ չենք դնում: Մենք մեր թերթի խնդիր չենք շինում իրաւագիտութեան և դատաւարական հարցերի խիստ գիտական մշակութիւնը... Մեր խնդիրները աւելի համեստ են և աւելի գործնական բնաւորութիւն ունեն: Կովկասեան դատարանների 12 տարեալ գործնական

իսկ մեր քահանաները, ի հարկէ, անընդունակ են գրաւել հանդիսականներին կենդանի քարոզով, ֆրիստոսի խօսքերի մարդու սրտի ու մտքի վրա ներգործութիւն ունեցող խեղացի բացատրութեամբ:»

ՇՈՒՇՈՒ հայ թատրոնները դիմել են մեզ խնդրելով որ տպենք «Մշակի» մէջ հետեւեալ յայտարարութիւնը: «Մենք ամառում ենք դիմել հրապարակաւ մեր շուշեցի այն պարոններին, որոնց քաղցր է գալ խեղճ սրտողների ներկայացումներին և մի և նոյն ժամանակ անամօթաբար չը վճարել տոմսակների փողերը: անկողի որ չեն էլ եղել թատրոնում: Այդ պատճառով խնդրում ենք, եթէ կամենում են զրբստել իրանց արածը, վճարեն իրանց վրա պարտինացած տոմսակների գները, իսկ հակառակ դէպքում մենք կը հրատարակենք պարոնների անունները:»

Հրատարակվեցաւ «Անդաւանդների հովանաւորութեան» թիֆլիսի ընկերութեան երեք տարվայ գործունէութեան հաշիւը հետեւալ վերնագրով «Очеркъ дѣятельности Общ. Покров. жи-вотнымъ за первое трехлѣтіе.»

Հրատարակվեցաւ «Юридическое Обозрѣніе» չարաթարքի երկրորդ համարը: Երրորդ համարում կը տպվի մարտի 1-ի երեւոյնագործութեան առիթով թագաւորապետների վրա եղած դատաւարների ընդարձակ հաշիւը:

Գուրս եկաւ «Փորձի» մարտի տետրակը, որ պարունակում է իր մէջ հետեւեալ նիւթերը I. Շահէ, II. Պեռնանցի (վերջ), III. Ներսէս Ե. Աշտարակեցի, IV. Երեմիանի, V. ճանապարհորդական նկարագրութիւն, Գաղափարներ, IV. Ինչ անենք, բանաստ. Գամառ-Պարթևայի, V. Թատրոնի երկրորդ կարգադրելը, VI. Գրէյֆուտի, VII. Հրէական ու յոյններ, Գլուխների, VIII. Օրադրը թիֆլիսի ընդ հայերէն գրքերի հրատարակութեան, VIII յղակաբար, IX. Մասիսի Ազգային Հեկտոր Ֆերիամուսկա, վէպ, X. Յայտարարութիւններ:

Այն լուրը, իբր թէ յայտնի փաստաբան Սպասովիչ յանձն է աւել տաշտպանի Գրէյֆուտի և Հօրվիցի դատը տեղորոշում դէմ, սխալ է: Կարծում են որ այդ դատը Ս. Պետրբուրգի նահանգական դատարանում կը պաշտպանի նախկին երդուեալ հաւատարմատար Սերբերենանի:

Մոսկվայի «Русская Газета» լրագիրը պատմում է հետեւեալ զարմանալի լուրը: Երբ բերում էին Փարիզի երեկոյն ուսուցիչ Նիկոլայ Բուրբինայի մարմինը ցինկի դազաղի մէջ և փայտեայ մեծ արկղի մէջ դրված, երկաթուղու նոյն գնացքով բերվում էր և Բաշտանի նահանգների մի բարձնալի մարմինը, որ նոյնպէս Փարիզում էր վախճանվել: Երկաթուղու մի տեղի վրա, որտեղ ճանապարհը ճիւղաւորվում էր, խառնեցին դազաղները և այդպիսով բարոնէսայի դազաղը ուղարկվեցաւ: Մոսկվա, իսկ Բուրբինայի մարմինը Ռիգա: Այժմ կարծում են որ Մոսկվա քաղաքը, որ այդքան հանդիսաւոր կերպով թաղեց իր սիրելի երաժիշտ

նութիւնից յետոյ ամեն մի դատաստանական գործող անձն ձեռքը սրտին դնելով պէտք է աղնութեամբ խոստովանի, որ կատարանական յեղափոխութիւնը կովկասում շատ թէ քիչ պատահական գործ է, և յամենայն դէպ, ոչ բաւականին ծանր մտածած և ոչ բաւականին հաստատ կերպով կեանքի մէջ մոցած: Կատաստանական կանոնադրքերի մեր երկրին յարմարացնելու կարգադրութիւնը, խորտակելով առանց մի առանձին կարեւորութեան շատ օգտակար, իսկ երբեմն և շատ էական հաստատութիւններ, որոնց վրա հիմնվում են 1864 թվականի դատաստանական կարգըրը Ռուսաստանի համար ստեղծված, շատ բան թողեց անձեռնամխել, որ կաւելի էր մեծ օգտակարութեամբ փոփոխվել, յօդուտ այն առանձին յատկութիւնների, որոնք արդարեւ կովկասին միայն կը պատկանեն: Միւս կողմից ուստաց օրէնսդրութիւնը թէ քրեական և թէ քաղաքականը, ամբողջապէս մոցրել են կովկասում, այն ինչ ամենայն յայտնի է, որ կովկասը ամենայն տեսակ առանձնութիւնների երկիր է: Բազմադարեան պատմութիւնն ազգերի, որոնք բնակվում են այս հրաշալի և հարուստ երկրում, նրանց այժմեան տնտեսական դրութիւնը, վաճառականութիւնը, արտադրութիւնը, վերջապէս նրանց մտաւոր, բարոյական և կրօնական զարգացման աստիճանը—այս ամենը այն չէ կովկասում, ինչ որ է Ռուսաստանի ներքին նահանգներում: Շատ բանի մէջ մենք յետ մենք մնացել Ռուսաստանից, կայ բան որ կարելի է ասել, թէ աւելի առաջ ենք գնացել: Ժողովրդը ներկ պահանջները և հարկաւորութիւնները ամենին մի և նոյն չեն ամեն տեղ, սրա համար և

Բուրբինային, իսկապէս Բիզայի պառաւ բարոնէսային էր թաղում, իսկ Բիզայի մէջ հանդուցեալ բարձնալի զաւակները փոխանակ իրանց մօր վրա, լաց էին լինում մի տղա-մարդու մարմնի վրա: Լրագիրը երաշխաւոր չէ հաղորդած լուրի համար, բայց աւելացնում է որ այդ շատ հաւանական է, որովհետեւ այդ տեսակ անկարգութիւնները շատ անգամ են պատահում ուսուցչական երկաթուղուներին հետ: «Русск. Газ.» պատմում է որ նորերումս կաշին դաւառական քաղաքում թաղում էին այդպիսի հարուստ կաւաւածատեր տիկնոջ, որ վախճանվել էր օտար երկրներում և որի դազաղը նոյնպէս բերած էր երկաթուղու: Երբ դազաղը արդէն իջնում էին փողը, նրա միջից լսվեցաւ կոտորովոյ ամանների ձայն: Բայց արին և յայտնվեցաւ որ երկաթուղին խառնեց արկղերը: Հանգուցեալի տեղ կաշինցիները ստացան ամաններով լի մի արկղ, իսկ մեռածի մարմինը երեք ուղարկվեցաւ ուրիշ քաղաք ամաններ ծախողին: Երեւոյնեցի խառնութեամբ զրուցելու, երբ բաց անելով արկղը, փոխանակ ֆարկիկայի իր սպասած ամանների, կը գտնի արկղի մէջ մի մետաղական դազաղ, որին բաց անելով նրա աչքերին կը ներկայանայ մի պառաւ կնոջ դիակ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

„Порядокъ“ լրագրի մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը Բերլինից մարտի 20-ից: Կառավարութեան առաջին անաշորութիւնը ընդհատեց մէջ միւսների պատճառ դարձաւ: Երկու ամեայ բեւադեպի և օրէնսդրական չորս տարվայ ժամանակա-միջոցի նախագիծները մեթփած են լայնատաղից, չը նայելով միացեալ խորհրդի ան կախ անդամների պաշտպանութեանը: Ինչ կը վերաբերի հարկերի օրինագիծին, նա էլ չի աշորվի: Բացառութիւն է կազմում միայն բօրային գործողութիւնների հարկը: Գրեթէ բոլոր կուսակցութիւնները այդ օրինագիծը իրաւացի են համարում, միայն կամենում են մի կողմից մեղմացնել նրա ստորացնող և վերաւորող բնաւորութիւնը, իսկ միւս կողմից ունչացնել այն անյարմարութիւնները, որոնց շնորհիւ այդ հարկը բոլորովին չէ ազգում մեծ գումարների վրա և ծանրանում է փոքր գումարատէրերի վրա: Այդ հարկը և ծխախոտի հարկը միակ են, որ յանձնված են մասնաժողովի քննութեանը, իսկ գարեջրի և զինուորական հարկերը վճռված է քննել ուղղակի լայնատաղի մէջ առանց մասնաժողովի օգնութեան և այդպիսի կարգադրութիւնը

օտարտու է մոցնել կովկասում ամբողջութեամբ այն օրէնքները, ինչ օրէնքներ ներգործում են Ռուսաստանում, ինչպէս որ օտարտու էր լինել պահանջել, որ արջի մուշտակը գործ դնեն միա-կերպ և թիֆլիսում և Երկուստեքում: Օրինակներ բերելու համար պէտք չէ հեռու գնալ: Ժառանգութեան, ընտանեկան կապի, տիրապետութեան ընդհանրապէս և ջրատիրապետութեան մասնաւորապէս և այլն օրէնքները մինչև այս օրս մը-նում են օտարտու բնակիչների կեանքին, որոնք այս առարկաների վրա ունեն իրանց առանձին հայեացքը և որոնք իրանց իրաւաբանական կեանքի մէջ գործադրում են իրանց առանձին պատմութեան մշակած կանոնները: Վրէժնորդութիւնից ծագած սպանութեան այլ և այլ տեսակները, գողութիւնները և այլն պատմվում են ուստաց օրէնքներով, այն ինչ ճշմարտութեան առաջին պահանջը ստիպում է ուշադրութիւն դարձնել այն ժողովրդի բարոյական և բնկերական պայմանների վրա, որի մէջ այդ յանցանքները կատարելու են: Միայն այն պայման է արդար համարվում, որը իր գործութեամբ համապատասխան է յանցաւորի բարոյական անկման և նրա չար կամքի ձգտման աստիճանին: Քրեական պատ-ժի խտութիւնը դեռ երբեք չէ ուղղել բար-քեր: Եթէ կեանքը մարդու մէջ այն համոզմունքն է կրթել, որ իր վշտացնողին սպանելով, նա կատարում է իր բարոյական պարտաւորութիւնը, եթէ այդ պարտաւորութեան շնորհիւ նրա մէջ հաստատ ապրում է, եթէ նա ընդունակ չէ հաշուութեան պայմաններ կապել իր խղճի հետ, այն ժամանակ աքսորաբեր ոչ մի սպանաւոր չի արգելի հեռու կենալ սպանութիւնից, և մին-

Հաւասար է նրանց մերժելուն: Այսպիսի վճռի անփախչելի լինելը երեւում է և սկզբնական վիճաբանութիւններից, որոնց ժամանակ երեւաց, որ մեծամասնութիւնը ընդդէմ է այդ երկու նախագիծներին: Որինակ զինուորական օրէնքի քննութեան ժամանակ կառավարչական առաջարկութիւնը ոչ մի քուէ չը ստացաւ: Մինչև անգամ իշխան Բիսմարկի Հպատակ կայսերական կուսակցութիւնը ընդդէմ էր կառավարչական նախագիծին: Բայց այդ «երեւելի Հրապարակասօ» և «իշխան Բիսմարկի փայլուն գործակից» պրոֆեսոր Տրէյչկէ սաստիկ յարձակվեցաւ նախագիծ վրա և նրան կատարելապէս դատապարտեց: Այդ բոլոր մարգիւրանց ընդդիմադրութիւնը Հասնում է այն եզրակացութեան, որ զինուորական ծառայութիւնը իւրաքանչիւր գերմանացու առաջին պարտաւորութիւնն է և նրան ամենամեծ պատիւ է բերում, որ կը կորցնէր իր մեծ նշանակութիւնը, եթէ նրան կցվէր զբոսայգի Հարցը: Կառավարութիւնը այդ Հարկի Համար այնպիսի երկար անուն է հնարել, որ զփուստ է արտասանելում, բայց ժողովուրդը արդէն անուանեց և միշտ կանոնաւոր նրան «զինուորական Հարկ»: Ով որ չէ ծառայում, նա պէտք է վճարէ, ապօրէժ է օրինագծի մէջ, իսկ ժողովուրդը այդ նախադասութիւնը հետեւալ կերպով կը փոխէ. ով որ վճարում է, նա կարող է չը ծառայել: Այդպէս էր խօսում երեւելի Հրապարակասօսը, Համազօրութիւնը մերժել կառավարութեան պահանջը, որի ընդունելը կը մնասէ միլիտարիզմի այն հրաշալի ոյժին, որ պրուսական պետական կեանքի հիմն է և Գերմանիայի հզօրութեանը նպաստող: Դուք կամենում էք, շարունակում է Տրէյչկէ, տուգանք վերցնել նրանցից, որոնք Ֆիզիկական պակասութիւնների պատճառով կամ դատարանից անարգված լինելով, չեն կարող կատարել զինուորական ծառայութիւնը: Բայց մի ելից չէ կարելի երկու կաշի հանել. առաջինները չափազանց դժբաղդ են, իսկ երկրորդները բուսական պատժված են նրանով, որ զրկված են մեր պատուական գօրծքի կարգում ծառայելու պատիւից: Սա միակ պատճառն է, որ զրգում է ընդհանուր անդամներին մեր

ժել զինուորական հարկը և ինքը պատճառազմական մինիստրը շատ թոյլ պաշտպանեց օրինագիծը։ Այդ պատճառը իսկապէս մեծ նշանակութիւն ունի պրոնական տեսակէտից, բայց այլ ժողովուրդներին առաջ դուցէ կօգնէր նոյն իսկ կառավարչական նախագիծին։ Այսպէս թէ այնպէս կառավարութեանը գերմանական հրաշալի զօրքերի համար դրամ է հարկաւոր և եթէ այդ օրինագիծը մերժվի, նա 30 միլիոն պակասորդ կունենայ։ Այդ հանգամանքը չափազանց բարկացնում է իշխան Բիսմարկին, մասնաւոր դր նրա անձնական միջամտութիւնը այս անգամ սովորական ազդեցութիւն չունեցաւ. բայխստադը լսեց նրա ասածները անտարբերութեամբ և այնպէս վերաբերվեցաւ նրա ցանկութիւններին, կարծես խօսողը մի հասարակ մինիստրական գործակատար լինէր և ոչ թէ գերմանական կայսերութեան երկերի ստեղծողը։ Ինչպէս երևում է, Բիսմարկ կամենում է օպագայում վրէժխնդիր լինել այդ անուշադրութեան համար և նրա ճառն էլ այնպիսի բնաւորութիւն ունէր, կարծես նա իր լսողներին համար չէր արտասանվում, այլ մի ուրիշ համար։ «Ժողովուրդը իրաւունք ունէ իմանալ, թէ կառավարութիւնը ինչ բանի է ձգտում»։ Այս նախադասութիւնը իշխանը չորս անգամ կրկնեց և այդ կատարելապէս իրաւացի միտքը իսկոյն մեկնեց հետեւեալ ինքնուրոյն ձևով. «ուզողսի հարկերի տեղ կողմնակի հարկեր մտցնելով, կառավարութիւնը կամենում է թեթեւցնել աղքատ ազգաբնակչութեան վիճակը և հարկերը զլխաւորապէս հարուստների վրա դնել և աշխատանքի համար անընդունակ անձանց ապահովութիւնը ընդարձակելով, բարեխաւի իւրաքանչիւր քաղաքացւոյ դրութիւնը։ Այդ բանը ցանկացող ընտրողները պէտք է ձայն տան այնպիսի պատգամաւորներին համար, որոնք պատրաստ են այդ նպատակով պաշտպանել կառավարութեանը։ Իսկ ով որ չէ ցանկանում, կարող է ուղարկել լայխստագ կառավարութեանը ընդդիմադրող առաջադէմ կուսակցութեան անդամներին»։ Այդ ասածները շատ պարզ են։ Իսկ եթէ ի նկատի առնենք, որ այդ բանը ասում է մի

սմենսագործարդ, որ բորոքովին անկախ է ժողովրդական ներկայացուցիչներից, այդ խօսքերի նշանակութիւնը աւելի էլ հասկանալի կը լինի: Այսպէս են կատարվում Գերմանիայի ներքին գործերը: Մինչև այժմ ընտրողները շարունակում են իրանց յամառութիւնը: Գեկտեմբերից մինչև մարտ չորս նահանգների մէջ լրացուցիչ ընտրութիւն ենք էին նշանակված և ամեն տեղ ընտրված են կառավարութեանը ընդդիմադրող առաջադէմները, թէպէտ այդ նահանգներին մէջ մինչև այժմ պահպանողականներ էին ընտրվում: Մինչև այժմ իշխան Բիսմարկ այդպէս բացարձակ չէր յայտնել իր ատկութիւնը և անձնական զգուսնքը դէպի այդ ֆլա ս ա կ ար կուսակցութիւնը: Իսկ այդ կուսակցութիւնն էլ յամառում է: Որքան խստութեամբ նրա վրա յարձակվում է առաջին մինիստրը, նոյնքան աջդուրսութեամբ պաշտպանվում է առաջադէմ կուսակցութիւնը և հարուածներ է վերադարձնում պետական կանցլերին: Այս անգամ էլ հարկերի հարցի առիթով կառավարութեանց ներկայացրած մեկնութիւնները, որոնց հեղինակը իշխան Բիսմարկն է, խիստ և անողոք քննադատութեան ենթարկվեցան առաջադէմների կողմից: Ամենից առաջ քննադատեցին կառավարութեան գոված կողմնակի հարկերի սկզբունքը և ապացուցին, որ Ֆրանսիայի և Անգլիայի օրինակը անյարմար է, որովհետև այն, ինչ որ կարելի է կատարել այդ երկիրների մէջ, անգործագրելի է Գերմանիայում: Այնուհետև առաջադէմները սաստիկ յարձակեցան գինուորական ուղղակի հարկի նախագծի վրա: Ընդդիմադրողները օգուտ քաղեցին Բիսմարկի այն նախադասութենից, թէ օղիի վրա հարկ դնելը անիրաւացի է, որովհետև ամբողջ օր աշխատող բանուորները իրաւունք ունեն կազդուրել իրանց յոժիւրը մի թաս օղիով: Ընդդիմադրողները հաւատացնում էին, որ այդտեղ մեծ դեր են խաղում կալուածատերերի շահերը, որոնք օղիի նիւթեր են տալի և որոնք կամենում են անփնառ գարնջուրը հարկի ենթարկել, որպէս զի իրանց արդիւնաբերութիւնը աւելի մեծ գործածութիւն ունենայ: Պատահմամբ իշխանի նախագծի դէմ

դիտեցին մի գիւղաանտես, մի գործարանահատեր և մի բժիշկ, որոնք զանազան տեսակէտերից և միատեսակ խառութեամբ ընդգրկմանում էին զարեջրի հարկի աւելացնելուն, եթէ օղիի հարկն էլ չաւելանայ, որովհետեւ առանց այդ էլ օղին վերջին ժամանակ վտանգաւոր առաջադիմութիւն է գործում քաղաքի և գիւղական բանտորների մէջ: Այսպիսով տնտեսական հարցերի վերաբերութեամբ իշխան Յիսմարկ անդադար անաջողութիւնների է հանդիպում և նա ստիպված է համբերութեամբ սպասել ապագայ րայխստագին: Գուցէ նոր րայխստազը անելի մեղմ կը լինի: Եւ որ նոր ժողովին մերժված նախագիծները նոյնութեամբ կառաջարկվեն, կասկած անգամ չէ կարող լինել: Ուրիշ կերպ չէ էլ կարող լինել: Բայխստազը անգադար փոխվում է, իսկ առաջին մինիստրը միշտ նոյն մարդն է մնում: Այսպէս է գերմանական սահմանադրութիւնը:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա, Զ Գ Ա, Յ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Յ

Ս. ՊԵՏՏԵՐԲՈՒՐԳ, 9 ապրիլի: Պաշտօնապէս հաղորդված է. Տպագրական գործերի գլխավոր կառավարիչ Աբազա իր խնդրի համեմատ արձակված է պաշտօնից: Տպագրական գործերի գլխավոր կառավարչի պաշտօնակատարութիւնը յանձնված է օտար ցեղերայի մասնաժողովի նախագահ Իշխան Վեռգեմսիւնի: Թաղաւոր Կայսրը Աբազային շնորհակալութիւն է յայտնում տպագրական գործերը կառավարելու համար: Այսօր 'ի Տէր Հանգուցեալ Թագաւոր Կայսրի գերեզմանը զարդարված է նոր ծաղիկներով և պսակներով:

Ս. ՊԵՏՏՐՈՒՆԻՐԿ, 10 ապրիլի: Ֆիլոսոֆ-
րայի առաջն առնելու համար արգելված
է տանել Անդրկովկաս և Հիւսիսային Կով-
կաս Սև և Ազովյան ծովերի բոլոր նաւա-
հանգիստներով, նոյնպէս և ցամաք ճանա-
պարհներով ամեն տեսակ բոյսեր, նոյնպէս
և այգիի կանաչեղէն, խաղողի որթեր և
տերեւներ:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

է անգամ նա կախադանը կը բարձրանայ այն տեսակ մարդու հանդարտութեամբ, որը խոստովանում է թէ նա միայն իր պարասուրութիւնն է կատարել: Միթէ քրէական պատմիժները, թէպէտ և լինէին դրանք ամենախիտա, կարող են ներշնչել հասարակութեան մէջ քրիստոնէական սիրոյ և ողորմածութեան հոգին, միթէ կարող են նրանք ոյժ տալ նրան ներել իր ատուղներին և սիրել իր թշնամիներին: Փոխեցէ՛ և բարեւաւացքէ՛ ժողովուրդի կենսքի տնտեսական պայմանները, տուէ՛ նրան լաւ դպրոց, տուէ՛ նրան միջոց խիօք և ազնուութեամբ աշխատելու, և դուք կը հասնէք այն հետեանքներին, որոնք երբէք հաւանելի չեն քաղաքակրթողի, ցիվիլիզատորի համար, որը զինաւորված է միայն պատմիժների կանոնադրութեամբ:

Այսպէս ուրեմն՝ թէ դատաստանական օրինակաբոլը, թէ օրէնսդրութեան օրինակաբոլը — այս երկու կարգերն ես, որոնք գործադրվում են մեր մէջ, բոլորովին բաւարացուցիչ չեն կենսքի պահանջներին և ամեն բանի մէջ նրանց հետ անհամաձայն: Յոյց տալ օրէնքի կանոնի հետ ունեցած այս անհամաձայնութիւնը, իրաւունքի կանոնների ժողովրդեան կարիքներին հետ զգած հակասութիւնը — ահա այն ամենում մերձ և ամենազլուատը խողրրը, որը մենք մեր առաջն ունենք: Այժմ մեր ցուցմունքները կը լինեն խելօք և արդարացի, մինք հաւատացած ենք, որ դրանք նկատելի կը լինեն: Այս յիշատի՛ որ այն մարդիք, որոնցից կախված է օրէնսդրութեան շարժումը դարձնել այս կամ այն կողմը, դիտարկել կամսմունքն իր օրէնքի դրանք, կամ միմէկ անգամ դիտմամբ չեն կամս-

Նույն գործը լրարի: Բայց կայ մի հին առակ: «մինչև երկխոսն լայ չը լինի, մայրը չի հասկոնալ»): Մեր կառավարութեան մեքենայի պակասութիւններից մինն էլ այն է, որ քանի բարձր է կանգնած մի յայտնի անձն հասարակական պաշտօնի մէջ, այնքան աւելի նա ունի աւելորդ և երբեմն վնասակար միջնորդներ իր և հասարակութեան մէջ, այնքան նա աւելի սակայն ղեկավար՝ անմիջապէս ժողովրդեան կարիքին և ուրեմն այնքան աւելի միջոց չունի իմանալ առաջին աղբիւրներից հասարակութեան օրինաւոր ցանկութիւնները: Մեր կեանքի պայմանների մէջ խեղճ և ազնիւ մասուլի խնդիրը ի միջի այլոց հէնց նրանումն է, որ ամեն կերպով ընդգլխաւորէ այդ աւելորդ միջնորդները բազմաշաւուն և իբրև ճշմարիտ յայտարարող հասարակաց կարծիքի, դառնայ նա մտքուր ազդեւորողներից ցանկացողները կարողանային զուրկել հասարակաց կարիքների և հոգիների վրան ճիշտ հասկացողութիւն: Բայն այդ խնդրակէզգործական ազատկար նպատակից, մեր թերթը իր նպատակին կը համնի, եթէ իր աշխատութեամբ նա կը պարզէ հասարակութեանը նրա իսկական պահանջները: Հասարակական ճանաչութեան ամեն մի լուսաւորութիւնը արդէն նշանաւոր քայլ է կազմում նրա մտաւոր պարգոյման ճանապարհի վրա:»

«Բայց իրաւագիտութեան շրջանը — ընդարձակ շրջան է: Ի սրբին ոչ ոք չի կարծի, որ նրա սահմանները փակված են կանաչադրեքի եզր հատորի մէջ: Ամեն մի հասարակական երևույթ այս կամ այն կողմից ղեկավար է անշուշտ ժողովրդի իրաւաբանական կեանքին: Իրաւա-

բանը չէ կորուզ, օրինակի համար, չը մասնակցել հասարակական խնդանաբարության գործունեության մեջ։» Այս միտքը հաստատելու համար յօդուածը օրինակներ է բերում քաղաքականապէս վարչութիւնը, բանկերը և այլն և այլն, որոնք համահաւասար նկիւթ են լինելու թիւրթի համար։

Այնուհետեւ «Իրաւաբանական Տնտիւթիւնը» յայտնեալով այն միտքը, որ անձնականութիւնը մի կողմից թողնելով, նա յարձակվելու է իշխանութեան ամեն մի չարագործութեան վրա և երբեք լռելու չէ։ Իսկ ամեն մի անձն, որ այդպիսի չարագործութիւնից վնասով է, նա կը գտնի թիւրթի մէջ կատարեալ պաշտպանութիւն։ Իրաւագործութիւնը իր յօդուածը ամփոփում է մի քանի հետեւեալ խօսքերով. «օգնել համաճայնայնից գործող օրէնքը կեանքի հետ պարզել իրտաբանական կեանքի մոլի կողմերը և լռելով այն խնդիրները, որոնց լռելիք տայն իսկ հասարակութեան զարգացող իրաւաբանական կեանքի պահանջներն են ստիպում, օգնել մերձիցնել ցրուած, բաժանված և շատ անգամ միմեանց անյայտ հասարակական ոյժերը հասարակաց շահերին ծառայելու ընդհանուր գործի մէջ, գուրս հանել իրաւաբանական կեանքի երկուցիւթերի ներքին բնաւարութիւնը, զոնեւ նրանց պատճառները, օգնել հեռացնել այն ինչ որ նրանց մէջ վատն է և ամբողջնելու այն ինչ որ լաւն է — ա՜հա այն իսկական գործնական խնդիրները, որ սկզբներում թերթեւնալ են Թէ ինչքան այս խնդիրները իրագործելի են, կը ցոյց տայ ի հարկէ ապագան բայց մէկ բանի մէջ կատկած չը կայ այժմս իսկ այն է մեր անկեղծ և եռանդուն պատրաստութիւնը»։

կանոններն էլ ծառայելու այս գործին մեր ամեն
պջեկովը։


Ընթերցողը պարզ հասկանում է յիշաւի թէ
ինչ մեծ օգուտ կարող է բերել այս պրօգրամին
կի իրաւաբանական թերթը մեր հասարակութեան
Վերջ կարծում ենք, որ եթէ տալուհետեւեամբ
և այդ ուղղութեամբ առաջ տանի գործը պ.
Ստեփանովը, առանց չեզոքելու նախադժած ձա-
նապարհից, կարող ենք համարձակ ասել, որ
մեր տեղական սպիկերի իրաւաբանական կեանքի
թաղցրած գանձերը կը բացվին, նրանց իրաւա-
բանական հայեացքները կեանքի այլ և այլ
կողմերի վրա կը քննվեն, այն ժամանակ՝ նա-
մազված ենք, որ օրէնքներն ևս կը կազմվին
համաձայն մեր ժողովրդի հայեացքի և նրա
բարոնադարեան պատմութեան վրա հիմնած իրա-
ւունքները։ Թէ դրանից ինչ օգուտ կարելի է
սպասել, կարծում ենք ամենին հասկնալի է,
առ այժմ մենք այս միայն կասենք, որ մի-
ապգ կ'եղի չուրի իրաւաձանաւորութիւն, նա մե-
ռած եզրերի թուում է։

Այսպանով այս անգամին բաւականանաւք:
Միս անգամին մինք կը զանանք հայ ազգի
իրաւարանական հայեացքների մի կարճ տեսու-
թեան, խոտտանալով մի և նոյն ժամանակ
«Մշակի» ընդհանրացուցիչին համառօտ հայել տալ
ամեն անգամ «Իրաւարանական Տեսութեան»
լոյս տեսնելով զըջոյկի:

Յակոբ Տէր-Յովհաննիսեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ ԼԻԿՈՎԻԿ ԻԵԳԵՐ ԻՐԵՆՑԵԼԻ-ԿԵՕԼՆԻ ՄԵՋ ՀՈՒՆՈՍ ԳԵՏԻ ՎՐԱ (ԳԵՐՄԱՆԻԱ)։ Առաջարկում է իր ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ՎԱՅՑԱԿԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՂԻՍՆԵՐ շինելու համար շաղիկ և ձիու ոյժերի համար, նոյնպես և ձեռքի շինութեան ԱՂԻՍՆԵՐ, ՊԻՏԱՆԵՐ, գրենաժի և ջրանցքի խողովակներ, կտուրի ԿՂՄԻՆՏՐԵՐ, ՖԻՍՏԱՍԿԱՆ կղմնարներ և ուրիշ տեսակ առարկաներ շինելու համար։ ԿԱՐ Հաղարկող և առարկայի ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՄԱՆՐԱՅՆՈՂ Ջրողացներ և մանաւանդ ՄԵՏԱՊԵՍ և միատեսակ ուժով զործող ՁԵՌՔԻ ՄԱՄՈՒԼ ԱՂԻՍԻ ՀԱՄԱՐ, որ աւելի օգուտներ է տալիս, քան թէ աղիւս շինելու մնացած բոլոր ձեւերը և աւելի քիչ ծախս է պահանջում։ Այդ պրեսների համար բաւական են երկու մարդիկ, որ պատրաստեն 4,000 զեղեցիկ աղիւսներ, մանաւանդ նա յարմարվում է ՏՐՈՏՈՒՄԵՐԻ և անցքերի առարկայի ԳԱՐԵՐ, կրակին ընդդիմադրող, ԿՐԻ և ՅԵՄԵՆՏԻ և չափի ԱՂԻՍՆԵՐ շինելու համար, նոյնպես և պատրաստած, բայց օգի մէջ կատարելապէս չը ցամաքած աղիւսները սեղմելու համար։



Նախագիծները ջրի են ուղարկվում։
LOUIS JÄGER, MASCHINEN-FABRIKANT IN EHRENFELD-KÖLN AMRHEIN (DEUTSCHLAND).

3—4 (13)

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց բնական ԳՈՅՆԸ վերադարձնող։ Վերը 2 ր. շերտ, ԳՈՅՆԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ.։ ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ։



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԼԻ, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին զլխայուրի գէմ, ՏՈՒՍԼԵՏԻ ՄԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն։ 50—100

Չը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գներով կը ծախվին։
ԿՈՆԳՈ-ԹԵՅ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ ՄՕՆԻՆԳ 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիւսնայի ԿԱՅՍԱՆՈՒ 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և ԱՄԵՆԱԼԱԻ ԹԵՅ 2 ր. առանց թղթի։ Անգլիական բէլժովները 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն ԲԱՐՆԱՐԻԻ ԹԱՄԲԵՐԸ, Ջոնսոնի ԿՈՂՊԵՔՆԵՐԸ, Տոբնօրի ԳՐԻՉՆԵՐԸ և Էկտորակա կակաո-շօկոյդի ծախելու համար, որոնք փարիզի հանգիսի ժամանակ ուկէ մեզալ ստացան։
ՀՈՏԱԼԵՏ ԹԵՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԵՅԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հաշուստ 15 ր., կոնֆէկտներ հազի գէմ 60 կ. ֆունտը։ 58—100

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրաւաճառանոցներում «Մտաւոր, Ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին» հեղ. Զոն Ստիւարտ Բէլկիկի. թարգմ. Գրիգոր Շահուրապետի. գինն է 60 կոպէկ։ Օտարաբարաբացիք կարող են ուղղակի թարգմանչին գիմել այս հասցեով. Вѣ Тифлисѣ, Учителью Армянской Духовной Семинаріи Нерсисянѣ, Григорію Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պարաստ է թարգմանչի հետեւեալ աշխատութիւնը. «Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած». հեղ. Ժ. Բամբուստի։

ՎԱՐՇԱՍԿԻ ՊԵԿԱՐՆԻԱ ՍՕԼՕԼԱԿՈՒԴ
տոռն կնիս պ ՍՄԵՐԱՕՎԻՆ
Պատրաստվում են մեծ քանակութեամբ պասքայ և կոշիկ և կը վաճառվեն ֆունտը 20 կ., 30 կ., 40 կ., 50 կ. և 60 կոպ.։ 2—3

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» ու «Կովկասեան» գրաւաճառանոցներում ՄՕԼԻԵՐԻ «ՏՂԱՄԱՂԿԱՆՑ ԽՐԱՏ», ՀԵՂԻՆՍԱՎԵՐԻ ԿԵՆՍՈՒԳՐՈՒԹԵԱՄԲԻ. Գինն է 30 կ.։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ծախվում են հազի գէմ ԿՈՆՑԵԿՏՆԵՐ 40 կ. ֆունտը, խնայի գինի ջերմի գէմ 1 ր. 50 կ. շերտ, պարսկական ՇԵՐԲԵՏ, ցիտրաղ մագնիզիայի ծարաւի գէմ 70 կ., ամենալաւ ԿՈՆՏԵԿ 2 ր., հին ՊՕՐՏՎԵՅՆ ԵԻ խերս 1 ր. 40 կ., ՄԵԼԻՍՄՈՍ և չոր ՍԱՊՈՆ և այլն։ 15—15

ԻՎԱՆ ՆԻԿԻՏԵՎ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐՈՎ
նոյն երեւնաճով և ՍՏԵՔԱՆ ԵԳՐՈՐՎՈՂ ԲԱՐԻՍՈՎ, ցուօք սրտի յայտնելով առաջինի մօր և երկրորդի քրոջ ՆԱՍԱԼԻԱ ԵԳՐՈՐՎՈՒՄԻ մահուան մասին, խնդրում են ծանօթներին և բարեկամներին ներկայ գտնվել հանգուցեալի յուզարկաւորութեան հանդիսին ՇԱՐԱՍ ապրիլի 18-ին առաւօտեան 10 ժամին։ Հանդուցեալին կը տանեն ՄՈՂՆՈՒ ԵԼԵՂԵՅԻՆ իր սեփական ձեռն 8 տանից Սոյալկում, ՆԱԳՐԵՆԱՍ փողոցի վրա։ 1—3

ԿԱԶԵՐ (приборы), սուգօղներ (судки) և այլն բրիտանական ՄԵՏԱԼԻՑ, ՄՈՒՐԱՐԱՆԵՐ և այլն շատ էժան գներով կարելի է գնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ։ 2—2

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМАНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրաւաճառանոցում։

1. Հայր և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դասախօսութիւն ընթերցում թիֆլիսի ժողովարանում Ազգար Յովհաննէսեանի. Թիֆլիս, 1881 թ. գ. 40 կոպ.
2. Նոյն տեղը վաճառվում են։
Միւլիթին Հայրութեան, Բանաստեղծութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օրմանեան, արտասանեալ ի լսարանին կրթասիրաց ընկերութեան Յիւսկիւտար ի 17-ին նոյեմբերի 1879 թ., Կ. Պոլսի գ. 45 կ.
3. Տեղեկագրութիւնը ի փոքր և ի մեծ Հայս Հ. Ներսէսի Սարգսեան Միւլթարեան վարդապետի, Վ. Ենեալի գ. 1 ր.
4. Ստորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ղուկ. փարզ Ինձիճեան ի Միւլթարեան Միւլթ. ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վ. Ենեալի գ. 5 ր.
5. Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիկերցիոյ, Վ. Ենեալի գ. 1 ր. 50 կ.
6. Մեծին Գրիգորի Առաջնոյ Սրբոյ Քահանայապետի կանօն Հովուական, Վ. Ենեալի գ. 1 ր. 50 կ.
7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ծառք և աղօթք, Վ. Ենեալի գ. 2 ր.
8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանեալ Վ. Ենեալի գ. 2 ր.
9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեալութիւն յամի 1876 Առաջայ Մ. Արթուրեան Ֆօքշան գ. 1 ր. 20 կ.
10. Սոյ. Կաննի Գերթում և Մահն Արեւի, թարգմանեալ Տիւառն Հ. Մանուկի Վ. Զախճախեան ի Միւլթարեան միաբանութիւնէ, Վ. Ենեալի գ. 1 ր. 75 կ.
11. Առաջ Միւլթարայ Գոշի, Վ. Ենեալի գ. 1 ր.։
Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատիկ տօներին նուիրելու պանազան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառապաշտ գրքեր, Փրէքլեան խաղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն։
Օտարաբարաբացիք ծանապարհի ծախք են վճարում 10⁰/₀, առանց փողի պատուէրները չեն կատարվում։

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ					
Համեմատեցէք թէյի ֆունտը	1 ր. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ	Ֆ. 1 ր. 30 կ.		
—	1 ր. 10 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	1 ր. 20 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	1 ր. 40 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	1 ր. 60 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	1 ր. 80 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	2 ր. —	—	—	—	Ֆ. 3 ր. —
66—100					

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ԿՈՎ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅ. Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԻԳՐ

1. Ա. Մ. Ե. Պ. — Գիւցաղունք ըստ խորենացւոյը Հայի, Արամ, Վահագն. պատկերներ պատմական կեանքից։ Տիֆլ. 81 թ. գինն է 30 կ.։
2. Կ ո ս տ ա ն ե ա ն յ. Կ.—Գրաբառ բաշիրի խոնարհումը մի աղիւսակի մէջ. գործնական և գիտակցական ուսումնասիրութեան համար. գինն է 25 կ.։
3. Ե Ր Վ Ն Կ Ե ա ն յ Ե Վ. Բ Շ Ն Յ. — Խմբական ձայնագրեալ ազգային երգեր (սակաւաթիւ) 50 կ.։
4. Մ օ Ր ի ս Բ Լ օ Ք — փոքրիկ ձեռնարկ

գործնական անտեսութեան. թարգմանեց զանազան փոփոխութիւններով Ս. Պալասանեանց 50 կ.։

5. Մոխէսի խորենացւոյ պատմութիւն Հայոց 80 կ.։
6. Զօն Ստ. Բլեկիկ—մտաւոր, ֆիզիքական և բարոյական ինքնակրթութիւն 60 կ.։

Մ ա մ ու լ ի տ ա կ ե ն

հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի

1. Մերենցի— Թէոդորոս Ռշտունի
2. — Թորոս Լեւոնի (2-րդ աղ-պագրութիւն)
3. Գամառ-Քաթիկայի—մանկական երգեր և ոտանաւորներ։

11—12

«Թիֆլիսի Բնիկ Երուրթեան հաս-յերէն գրքերի հրատարակութեան» ԸՎԻԶԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ Լինելու է ԵՐԵՎԱՆԹԻ, ԱՊՐԵԼԻ 14-ին Արժուոնութեամբ. ուստի վարչութիւնը խնդրում է ընկերութեան բոլոր անդամներին շնորհ-բերել այդ օրը առաւօտեան ժամի 11-ին։ Ընկերութեան կանոնադրութեան 33 յօդուածի զօրութեամբ ընդհանուր ժողով կայացած է համարվում, երբ ներկայ եղող անդամների թիւը թիֆլիսում գտնվող անդամների թիւի 1/3-ից պակաս չէ։

Դուրս եկաւ «ԱՇԽԱՏԱՆՔ» լրագիրը, համարը ծախվում է Շահվերդեանի մօտ, Կուշնարեի կոմիսիոնական խանութի մէջ, որ գտնվում է Գոյովիսկի պրօսպեկտի վրա, Լեւոնիճեանի և Յովսէփեանի ծխախոտի խանութներում, որոնք կից են ԵՎՈՎ կառ. հիւրանոցին և գտնվում են Կովորցովի փողոցի վրա։ Ծախվում է հատը 10 կոպէկով։